Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և տարեցների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրները, իրականացված աշխատանքները և նախատեսվող ծրագրերը

Հաշմանդամության բնագավառում վարվող քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերը հստակ ուղղորդված են հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններ և հնարավորություններ ապահովելուն և նրանց հասարակություն ինտեգրելուն:

Հաշմանդամության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ձևավորված է համագործակցության լայն դաշտ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ:

Նախարարությունը համակարգում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների աշխատանքը՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հասարակական կարծիքի փոփոխմանը, կարծրատիպերի կոտրմանը, մատչելի պայմանների ապահովմանը:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված է 193836 հաշմանդամ:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանը, հավասար պայմանների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում 2011-2013 թթ., յուրաքանչյուր տարի, շուրջ 9000 հաշմանդամների անվճար տրամադրվել են 14500 պրոթեզաօրթոպեդիկ և այլ վերականգնողական պարագաներ, որոնց տեսականին տարեցտարի ընդլայնվում է: Այդ նպատակով պետական բյուջեից տարեկան հատկացվել է շուրջ 960 մլն դրամ: Վերականգնողական պարագաների որակը բարձրացնելու, հաշմանդամների կարիքները առավելապես բավարարելու նպատակով տեխնիկական բնութագրերը հաստատվել են հաշմանդամություն ունեցող անձանց հետ քննարկման արդյունքում:

Լսողական խնդիրներ ունեցող անձանց համար լսողական սարքերով ապահովելու նպատակով ներդրվել է պետական հավաստագրերի համակարգը, ինչը հնարավորություն է ընձեռել լսողական սարքի կարիք ունեցող անձանց ստանալու անհատական կարիքներին առավելագույնս համապատասխան լսողական սարք, իսկ գործընթացը դարձել է ավելի բաց:

Իրականացվել են նպատակային ծրագրեր՝ ուղղված տեսողությունը կորցրած անձանց սոցիալական ներառմանը: Դրանք են՝ հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստում, «Խոսող գրքերի» ձայնագրություն, աշխատատեղի հարմարեցման շրջանակներում «Արև» համակարգի ուսուցում և համակարգիչների տրամադրում:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ: Բոլոր ծառայությունները հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվում են անհատական վերականգնողական ծրագրի հիման վրա, որը մշակում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովը:

Բժշկասոցիալական փորձաքննության համակարգի բարեփոխումների, փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչները միասնական ձևով կիրառելու, սուբյեկտիվ մոտեցումները բացառելու նպատակով հաստատվել են համապատասխան կարգեր և ուղեցույցներ: 2013 թվականից հանձնաժողովների աշխատանքներին մասնակցում են առողջապահության համակարգի բժիշկները, այդ թվում՝ նաև հիվանդին փորձաքննության ուղեգրող բժիշկը, հանձնաժողովների աշխատանքներին կարող են մասնակցել նաև հաշմանդամության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Իրականացված աշխատանքների արդյունքում բարձրացել է վստահությունը համակարգի նկատմամբ, աշխատանքները դարձել են ավելի թափանցիկ և բաց: Ստացվող դիմում-բողոքների բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում վերաբերում են հաշմանդամության կարգավիճակով պայմանավորված այլ ծառայություններ (հիմնականում առողջապահական) ստանալու անհրաժեշտությանը:

Հաշվի առնելով, որ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար առաջին նախապայմանը մատչելի, հավասար պայմաններն են, նախարարությունը, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային, մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովները հետևողական աշխատանք են տանում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մատչելիության ապահովման գործընթացի բարելավման ուղղությամբ:

2013թ. հանրապետության մարզերում 253 շինություն հարմարեցվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար (կառուցվել են թեքահարթակներ), իսկ Երևան քաղաքում հարմարեցվել է 80 շենք-շինություն և կառուցվել է 293 թեքահարթակ՝ հիմնանորոգվող փողոցներում: Երևանի քաղաքապետին կից ստեղծվել է հանձնաժողով, որն ուսումնասիրում է բոլոր ճարտարապետանախագծային առաջադրանքները և չի ներկայացնում հաստատման այն նախագծերը, որոնք չեն նախատեսում մատչելի պայմանների ապահովում:

Հանրապետությունում ամրագրվել և զարգացում է ստանում ներառական կրթության համակարգը, որը, շուրջ 3000 հաշմանդամ երեխաների համար, բացի մատչելի, որակյալ կրթություն ստանալու իրավունքից, ապահովում է նրանց

իրավունքը՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու: Ներառական կրթության ծրագրեր են իրականացվում նաև միջին մասնագիտական կրթական հաստատություններում:

Նշված հարցերը նույնպես օրակարգային են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի համար:

Հաշմանդամների զբաղվածությունը խթանելուն ուղղված են մի շարք պետական ծրագրեր, ինչը հնարավորություն է տվել 2011-2013 թթ. աշխատանքի տեղավորել 605 հաշմանդամի: Զբաղվածության պետական ծրագրերին զուգահեռ իրականացվում են նպատակային ծրագրեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Նման ծրագրերով ստեղծվում են սոցիալական ձեռնարկություններ, որտեղ 2014թ. աշխատանք կունենա 160 հաշմանդամություն ունեցող անձ, 154 երիտասարդ հաշմանդամ ընդունվել է միջին մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություն, աշխատանքի է տեղավորվել 194 հաշմանդամ, աշխատանքներ են տարվել նաև գործատուների հետ:

ՀՀ գործող օրենսդրությունը հիմնականում նպաստավոր է հավասար պայմաններ ապահովելու համար, սակայն հաշմանդամների հավասար հնարավորությունների առումով դեռևս կան լրջագույն, չլուծված խնդիրներ.

- միջավայրի մատչելիություն,
- հաշմանդամների զբաղվածություն (աշխատունակ տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց միայն 8 տոկոսն է զբաղված),
- հաշմանդամների վերականգնողական հնարավորությունների սակավություն:

Հաշմանդամության հիմնախնդիրներին համալիր լուծում տալու, սոցիալական ներառման և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության խթանման նպատակով նշված օրենքի նախագծով և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով կազմակերպությունների համար սահմանվել է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա): Միևնույն ժամանակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելուն ուղղված 2014թ. պետական ծրագրերի ծավալները ավելացվելու են 50 տոկոսով:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշման-

դամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգը, որի նպատակն է՝ բարձրացնել հաշմանդամության սահմանման գործընթացի օբյեկտիվության մակարդակը և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և հասցեականությունը: Շեշտը դրվում է անհատի ուժեղ կողմերի, պահպանված կարողությունների, նրա միջավայրային գործոնների վրա, նպաստելով նրա առավել ակտիվ մասնակցությանը հասարակական կյանքում, ներառյալ աշխատանքային գործունեությունը: Դա հիմք կստեղծի միասնական, համակարգային մոտեցում ունենալ անձի կարիքները և կարողությունները (կրթական, առողջապահական, սոցիալական պաշտպանության) բազմակողմանի գնահատելու և ըստ այդմ սոցիալական աջակցության ձևերի, այդ թվում՝ բազմաոլորտային ծառայություններ տրամադրելու համար: Դա հնարավորություն կտա բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականությունը և նպատակայնությունը՝ ավելի արդյունավետ վերաբաշխելով առկա պետական ռեսուրսները:

Այս մոտեցումը լիովին համահունչ է ինտեգրված սոցիալական ծառայությունների գաղափարախոսությանը:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրեր

Միայնակ, խնամքի կարիք ունեցող տարեց և հաշմանդամ քաղաքացիներին տրամադրվում են սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ ինչպես շուրջօրյա՝ տուն-ինտերնատներում, այնպես էլ տնային պայմաններում և ցերեկային խնամքի կենտրոններում: Վերջին տարիներին շուրջօրյա սպասարկման և խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամ անձանց թիվը կազմել է տարեկան 1090, իսկ տնային պայմաններում սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ ստացեղներինը՝ 3700, ինչի համար պետական բյուջեից տարեկան հատկացվել է համապատասխանաբար շուրջ 1,5 մլրդ դրամ և 260 մլն դրամ:

Նշված ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով 2011-2013թթ. վերանայվել են սպասարկման չափորոշիչները, ծառայությունների տրամադրման և ծառայություններ ստանալու համար քաղաքացիներին ուղեգրելու կարգերը:

Սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ են պատվիրակվել մի շարք հասարակական կազմակերպությունների:

Նման մոտեցմամբ իրականացվում է ժամանակավոր կացարանում անօթևան մարդկանց շուրջօրյա խնամքի տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում ապաստան և սնունդ է տրամադրվում 100 անօթևան մարդու:

Ելնելով նրանից, որ Հայաստանը դասվում է ծերացող բնակչություն ունեցող երկրների շարքին, մշակվել և ընդունվել է «Բնակչության ծերացման հետևանքներից

բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը», քննարկման փուլում է Տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու նոր հայեցակարգը:

Նախատեսվում է ստեղծել տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունների նոր համակարգ, որի հիմքում տարեց քաղաքացիների իրական կարիքների լիարժեք ու բազմակողմանի գնահատումն է և պետության կողմից երաշխավորված նվազագույն ծառայությունների փաթեթի տրամադրումը: Հայեցակարգով նախատեսվում է առաջիկա տարիներին Հայաստանում ներդնել սոցիալական ծառայությունների նոր մոդելներ, այդ թվում՝ նաև վճարովի հիմունքներով:

2013թ. մշակվել և ընդունվել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը» և միջոցառումների ծրագիրը, որի իրականացումն արդեն սկսվել է:

Օրակարգային են մնում անկողնային վիճակում գտնվող տարեցների և հաշմանդամների շուրջօրյա սպասարկման պայմանների բարելավման և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կազմակերպման համար լրացուցիչ տեղերի ապահովման հարցերը:

2011-2013 թթ. իրականացվել են աշխատանքներ սոցիալական տներ ստեղծելու ուղղությամբ, որպես անօթևան մարդկանց և ընտանիքների բնակարանային խնդրի ժամանակավոր լուծման միջոց: Մշակվել է համապատասխան իրավական բազա, որով կանոնակարգված է անապահով և անօթևան անձանց սոցիալական տներով ապահովման կարգը և չափանիշները: 2012թ. բնակեցվել են Մարալիկի սոցիալական բնակարանային համալիրի առաջին երեք շենքերը: Ծրագիրը շարունակական է և առաջին հերթին նպատակ ունի բնակարանով ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և սոցիալապես անապահով, բնակարանի կարիք ունեցող անձանց և ընտանիքներին:

Սոցիալական բնակարանային ֆոնդը աստիճանաբար համալրվում է, ինչը հնարավորություն կտա լուծել այս խնդիրը: